

• ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ •

ԱՐԻՍ ՄԻՍԱԲՅԱՆ

ՎԵՐԵԼՔԻ ԶԱՍՓԻՆ

• Պ Ե Տ Յ Ր Ա Տ •

891.99

Մ-76

891.99
 P-74
 myr

ԱՐԻՍ ՄԻՍԱԲՅԱՆ

ՎԵՐԵԼՔԻ ՃԱՄՓԻՆ

(ՅԵՐԿԱԻ ՊՈՆՄ)

1008
 34461



ՎԵՆՔԻ ՀԱՄՓՈՆ

1.

Յերիտասարդ եր նա, բայց հին բանավոր—
 Ջորադեսում նոր եր նա ընդունվել,
 Աշխատում եր այնտեղ նա ամեն ուր,
 Հարվածում եր անդուլ, փորում թունել:
 Նա ջահել եր... ջահել սրտումն իրա
 Ունեի անթիվ հույզեր, բերկլանք ու խինդ
 Ունեի աշխատելու ուժ ու յեռանդ,
 Յեվ բազումներ ունեի նա ջլապինդ:
 Ու նա վորպես տոկուն և աներեր
 Ու խնդությամբ լեցուն մի կոմյերիտ,—
 Խույս չեի տվել գործից, չեի թրեվել,
 Ու չեի թողել յերբեք գործն իր թերի:
 Յեվ բանում եր ենտեղ ընկերներով.
 Քլունկները յեղնում, իջնում եյին նորից և
 Փորում եյին թունել... և ձորերում
 Արձադանդն եր փովում հարվածների:

2.

Ահա Լեոն, լեոն... ու վիթխարի
 Ապառաժներն ահա, ժայռերը ցից,
 Կանաչ հազնող թփերը ցան ու ցիբ:
 Ու ժայռերի ներքև ամեն տարի
 Աշխատում են ենտեղ դարուն, ամառ
 Հարվածում են հուժկու ուր գիշեր.
 Յեվ լարվում են այնպես ալինդ ու համառ

Բազուկները նրանց պիտի ու ուժեղ :

Յե՛վ որերը ամուսն, արեւ տաք,

Գամինները շաչող, անձրևները հորդ

Չեն կասեցնում նրանց յեռանդն ու թափ

Յե՛վ մաքառող նրանց կամքը ըմբոստ :

Աշխատում են բոլորն ենտուգիադմով .

Բարձր ե խնդությունը ընկերների,

Աշխատում ե լարված նաև Սաքոն,

Վոր չմնա պլանն իրա թերի :

Յե՛վ ամխներ հետո մի իրիկուն

Ժողովներից մեկում նա լսում ե, լսում

Մի գեկուցում իրա բրիգադի

Պլանների մասին, — հարյուր հիսուն,

Հարյուր հիսուն տոկոս... մտքումն իրա

Գումարվում են ելի նոր-նոր թվեր,

Նոր ուժ ու թափ, նոր խինդ ու նոր յեռանդ... :

Կառուցվում ե ահա կայանը մեծ :

Յե՛վ անխները հսկա-յերկաթեղեն

Թափով դառնում են, դառնում արագ .

Բարձրանում ե ահա լույսի հեղեղ

Աւ տարածվում շուրջը՝ համատարած... :

Յե՛վ այս պայծառ ու վառ մտքի ներքո

Նա սուլում ե ուրախ, յերգեր ասում,

Յերգեր ասում, խնդում վողջ յերեկոն,

Կրկնելով մտքում՝ հարյուր հիսուն :

Գործել պիտի համառ, պիտի դործել,

Յե՛վ ամեն մի արգելք տրորելով՝

Գործուել միշտ համառ, բարձրանալ վեր,

Նոր բարձունք ու վերեւ դրոհելով :

Յ.

Մի որ ժայռի տակին մի վիթխարի՝

Դինամիտներ դրին, դրին Ֆիթիլ,

Ժայռը պոկվել պիտի հսկա սարից

Ու գլորվեր արագ ձորը դեպի :

Ֆիթիլները վառեց բանվոր Կարոն

Ու վաղ տվեց ուրախ, շտապ-շտապ,

Իայց վոտն իրա հանկարծ տվեց քարով

Յե՛վ գլորվեց դետին նա ուշաթափ :

Ընկերները վախից արձանացած

Դիտում եյին նրան՝ փոխած դետին,

Դիտում եյին հեռվից լուռ ու անձայն,

Վախենալով դնալ ժայռին մոտիկ :

Սակայն առանց վայրկյան կորցնելու,

Առաջ վաղեց բանվոր Սաքոն շտապ,

Վեր բարձրացրեց նրան, գրկեց ամուր

Ու յետ յեկավ արագ, ինքնալստահ :

Յե՛վ բարձրացավ ուրախ մի աղաղակ,

Գովասանքի ձայներ ու խնդություն,

Ու դրանց հետ մեկտեղ լավեց ահա

Մի ահռելի վորոտ, մի դղրդյուն :

Թնդաց ժայռը, վորպես բյուր թնդանոթ,

Հսկայական քարեր վեր բարձրացան

Հրթիռների նման պատռելով ողն,

Պատվեցին յերկար ու ընկան ցած :

Չորերի մեջ լավեց խուլ արձագանդ,

Շրջապատը ցնցվեց, թափով դողաց,

Լեռը կապտամշուշ վոռի հագավ,

Թռչունները թռան սարսափահար :

Իջա՞ղ ծուխը, վուխեց ձորը գետի,
Ուր դնացքն եր սուլում, թռչում արագ,
Ուր համերգն եր հնչում ծեր Դեյլեթի,—
Այն սրբնթաց գետի՝ հորդ ու վարար:
Յեւ Սաքոյին նրանք հենց են որից
Գուրդուրեցին սրտով ու սիրալիր.
Ու սիրելի դարձաւ նա բոլորին,
Վերպէս տոկուն ու ժիր հարվածային:

4.

Մի պարզ յերեկոյ յեր ամառային,
Լուսնկա ու զով եր, շուրջը խաղաղ,—
Յերբ վոր դործիցն իրա տուն դառնալիս,
Ստացաւ նա, հանկարծ այսպէս նամակ:
«Վերադարձի՛ր, վո՛րդիս, դարձի՛ր դու տուն:
Քեզ ե մնում հիւանդ մայրը քո ծեր,
Քո կարտան ե վառւում նրա սրտում.
Վերադարձի՛ր շուտով, վերադարձի՛ր:
Վերադարձի՛ր կրկին, իմ վերջին հո՛ւշս,
Վերջին իմ խնդութիո՛ւն, իմ վերջին սե՛ր:
Վերջին մխիթարանք դու իմ հոգույս,
Վերադարձի՛ր մահուցս առաջ՝ տեսնեմ»:
Կարդաց նամակը իրա, կրկին կարդաց,
Յեւ մտածեց յերկար, վողջ իրիկուն,
Քեան եր հոսում ներքե արագնթաց
Յեւ անտառն եր դիմաց մեղմ որովում:
Ու մյուս որն չտապ ճամփա ընկաւ,
Ճամփա ընկաւ գետի գլուղը հեռու,
Ուր դնացել-յեկել եր բոլոր անգամ,
Ուր ապրել եր մանուկ իր որերում:
Վերջաւորապէս, յերբ վոր նա տուն հասաւ

Թողած յետեն իրա հանդ ու լեռներ,—
Մայրը կարտագին դրկեց, ասաց.
«Յեւ կարող եմ հիմա հանդիստ մեռնել»:
Ու ձեռքերովն իր չոր դրկեց նրան
Յեւ համբուրեց դողդոջ շրթունքներով...
Մի ցուրտ ժպիտ սահեց դեմքի վրա,
Դեմքին իրա՝ դունատ ու յերերող:
Հետո նայեց այնպե՛ս... նայեց յերկար.
Նայեց կրկին, կրկին ու հառաչեց,
Այնուհետե նա ել... նա ել չկար,
Նա անշարժ եր արդեն, շունչը վռնեց...
Դուրսը պարզ ևր, անուշ, վճիտ ու զով,
Դրսում մանուկները իրար կանչում,
Յեւ խլրտում եյին ու կարկաչում,
Վորպէս աղբույրը ջինջ սարից վաղող:

5

Ամառային որ եր, կեսոր եր տոթ,
Աշխատանքը հանդում կանդ եր առել.
Նա նստած եր մենակ մի բարդու մոտ
Ու հայացքն իր անթարթ հեռու հառել:
Նայում եր նա յերկար ու մտածում,
Մտածում եր ինչ վոր, ծխում անձայն,
Ու մի միտք եր նրան ալեկոծում,
Մի դպացում նրան հուզում անծայր:
«Ունեյի յես միայն, միայն մի մարդ,
Մի սիրող սիրտ՝ անվերջ ինձ դուրդուրող,
Մի բարեկամ, վոր չկա հիմա...
Ձկա՞ արդյոք մեկը ինձ խնդ բերող»:
Բայց նրա դեմքն ահա կրկին վառվեց,
Գոյժառայալ, վորպէս կապույտ ջինջ.

«Յեա մենակ չեմ, ունեմ բոլոր ընկերներ...» —
 Ծննդաց նա նորից մեղմ ու հանդիստ:
 «Յեա շատ ունեմ սիրող սրտեր հիմա,
 Յեմ սիրում եմ սրտով յես շատերին,
 Չպետք է կույր լինել, լինել հիմար,
 Յեմ հույզերին տխուր դառնալ գերի»:
 Հետո այն որն հիշեց, յերբ քրտնաթոր
 Հունձ եր անում ելի նույն այդ արտում,
 Հիշեց մի աղջկա, վոր ամոթով
 Ասաց՝ —վորքան լա՛վ ես դու աշխատում . .
 Յեմ սիրալիր ու մառ մի ժպիտով
 Ժպտաց ու գլուխն կամաց թեքեց,
 Հետո նորից խոսեց՝ «Մնա մեզ մոտ,
 Ո՛ւր ես գնում, եստեղ լա՛վ չի միթե»:
 «Մնա՛ մեզ մոտ, ապրի՛ր մեր կոյնոգում,
 Ուր կաշխատենք մեկտեղ ամեն ամբան,
 Կրկին վրդանք, հնձենք հասկեր հասուն.
 Մնա մեզ մոտ, ել մի՛ վերադառնա...»
 «Ել մի՛ վերադառնա» հնչում եր դեռ.
 Չայնը նրա այնպես պարզ ու վստահ.
 Հետո հիշեց նրա ժպիտը ջերմ
 Ու խոսքերը նրա ջինջ ու հստակ:
 Մտածում եր այնպես, ծիծում անձայն,
 Բայց և ահա նրա աչքի առաջ
 Չորադեսը կրկին պատկերացավ,
 Պատկերացավ բազում խինդ ու շատուշ:
 Ահա լեռը ձգված... և բարձունքում
 Ապառաժներն ահա՛, ժայռերը ցից,
 Վոր տնքում են ու խոր արձագանդում

Ու վշտվում հուժկու հարվածներից:
 Ահա ահումբն իրենց, ուր շատ անգամ
 Ընկերներին այնտեղ եր ժողովում,
 Ընկերներին, վերոնք, այնքան, այնքան
 Սիրում եյին իրեն ու միշտ գովում:
 Գանի՛, քանի՛ անգամ յերեկոներ
 Չեկուցում է տվել հենց այդ բեմից,
 Հարվածել է դործը լքողներին
 Ու լավերին դովքի խոսքեր ձոնել:
 Հարվածային կարգով նրանք հիմա
 աշխատում են կրկին, փորում անդուլ,
 Ու սեպ լեռը ահա նրանց դիմաց
 Դղրդում է կրկին հուժկու թնդում:
 Յեմ տեսնում է, կարծեք, պարզ ու վճիտ
 Տուրբինները ահա, ու բյուր ձեռքեր,
 Տուրբինները հսկա, վորոնց միջից
 Յերևում են դարձյալ ծանոթ դեմքեր:
 Ո՛ր, դեմքերն այդ ծանոթ վորքա՛ն խրոխտ,
 Վորքան առույգ են, ժիր, և վորքան վա՛ռ.
 Նրանք մարտ են մղում, հուժկու դրո՛հ,
 Բայլչեիկյան գրոհ հաղթ ու համառ:
 Ի՞նչ են ասում նրանք իրա մասին
 Ինչ կարծիք են կազմում ճիշտ ու սխալ,
 Չե՞ն ասելու արդյոք՝ «նա սուտ խոսեց,
 Սիմուլյանտ եր, թողեց գործը՝ փախալ»:
 Մտածում եր նստած նա դեռ յերկար,
 Հիշում նոր-նոր դեպքեր, դեմքեր ծանոթ
 Ու վերկացավ հետո նա վճռական,
 Կրկնելով մտքումն իրա՝ «ամոթ»:

Մատիս եր մի վառ, պայծառ ու ջինջ,

Երես եր, վճիտ, չկար քամի,

Յերբ հրաժեշտն իրա տվեց վերջին

Յեվ դուրս յեկավ նորից իր հին տանից :

Յեվ անցնում եր յերբ վոր նա փողոցով,

Դարձյալ տեսավ նրան, այն աղջկան,

Վորի հայացքն այնպես խոր ու բոցոտ

Հալածում եր իրեն, տանջում այնքան :

Յեվ կանգ առավ կարծես նա ակամա,

Հրաժեշտ տալ ուզեց նրան նաև :

Դադր եր այնպես, քաղցր եր իրեն համար

Վերջին անգամ կրկին նրան նայել :

Յեվ մոտեցավ աղջիկն ու սիրալիր

Ժպիտով մի ժպտաց, հետո տրտում

Նայեց նրան անհազ կարոտով մի,

Ու հարցրեց կամաց. «Գնո՞ւմ ես դու» :

Յեվ շատ բան եր ելի ուղում ասել,

Սրտումն իրա կային այնքան հույզեր

Այնքան րերկրանք ու խինդ, բաղձանք ու սեր,

Բայց և այնպես նա ել վռչինչ չասեց :

«Գնում եմ յես, Սաթո՛, պետք ե դնալ,

Խոսք եմ տվել բոլոր ընկերներին :—

Ել չեմ կարող ետեղ յերկար մնալ,

Պետք ե վերադառնալ, դործել նորից» :

«Դործել պետք ե հուժկու, դործել համառ» :

Դործել առանց վայրկյան կորցնելու,

Չկատարելով իդուր վոչ մի ժամանց—

Կորցրածը կրկին յետ չի դալու» :

Դառա՛կարդը յերբեք ինձ չի՛ ների :

Ճեթե վարպես հասա մի կոմյերիտ՝

Փախչեմ դործից, դառնամ սիրո դերի

Յեվ աշխատանքը մեր Թողնեմ թերի,

Մակայն կըգամ մի որ, կըգամ կրկին,

Յերբ վոր ահա այնտեղ վառվեն լույսեր,

Յերբ կատարեմ պարտքը դասակարգիս՝

Յես կրերեմ քեզ նոր և՛ խինդ, և՛ սեր» :

Յեվ հրաժեշտ տվեց ու հեռացավ,

Բռնեց ձորադեսի ճամփան նորից :—

Յեվ աղջիկը յերկար դիտեց անձայն,

Մինչև նա խորքն անցավ զլուսներին :

Բ Ի Ս Ո Ւ Թ Ո Ւ Ն*)

Հաճախ ենք մենք այնտեղ թափառել,
 Յեւ չըմպել, և թախծել միասին:—
 Մենք այնտեղ խարույկներ ենք արել
 Ու դառներ ենք սլահել մայիսին:
 Գետի նեղ, ծաղկավետ այն ափին
 Շատ անգամ չըջել ենք յերեքով,
 Խաղ արել, մինչ թեքվել ե արփին,
 Մինչ փռվել ե խաղաղ յերեկոն:
 Խաղ արել խոտերում բարձրացած
 Խնդացել ենք ժայռի ներքե
 Ու հետո... հետո ել բարձրաձայն
 Աղմկել ու յերգեր յերգել:
 Յերգել ենք յերգը ծաղիկների,
 Այնուհետ նստել ծեր կաղնու տակ,
 Լսել ենք կարկաչը ջրերի
 Ու դիտել յերկինքը կապուտակ:
 Հիշում եմ, հիշում եմ միառմի
 Մանկության որերն այդ բոլոր,
 Վարդերն այն, կակաչները կարմիր,
 Ճամփեքն այն քարքարոտ ու վոլոր:
 Ահա ձորը խորունկ, անհատակ,
 Ահա դետը սրբիւրուն, գալարուն,
 Գետը, վոր աղմկով անդադար

*) Ժայռ Գարսիստանում, վորի վրա գրված են Դարեկի տը-
 ձանանգրությունները:

Թռչում ե գիւղելով քարերին:
 Թռչում ե գիւղելով քարերին,
 Յայտում են շիթերը նրա ջինջ
 Ու դարնան սիրաշող արևից
 Փայլում են այնպես վա՛ռ ու վճիտ:
 Ահա ջրաղացը կիսավեր,
 Զրադացն այն խարխուլ, հինավուրց
 Վոր հաճախ ձմրան ցուրտ որերին
 Մնում եր անջուր ու անաղուն:
 Յեւ ժայռը, ժայռը նրա վերե,
 Բարձրաբերձ, ահավոր ու մռայլ,
 Ժայռը, վոր անշարժ ու աներեր
 Լսելյայն դիտում եր միշտ նրան.
 Դիտում եր նրան իր բարձունքից:
 Սև ժայռը վորպես մի Իփսություն,
 Վորպես սլահակ մի լուռ ու արթուն՝
 Դիտում եր նրան իր բարձունքից
 Ո՞վ գիտե, ո՞վ արդյոք, թե քանի՛,
 Քանի՛ դար ե յեկել ու անցել,
 Յեւ վորքան հորդ անձրեն ու քամին
 Ծեծել են ճակատը նրա ծեր:
 Ծեծել են դուռը նրա ծեր,
 Հողմերը իրարու հակադիր,
 Յեւ վորել աղոսներ են բացել
 Նրա սև, ալևոր ճակատին:
 Յեւ ժամանակը իր սլափակահան
 Անցյալի խոր դրոշմներ դրել...
 Առ ամեն դարը, ամբին անդամ
 Կարծես իր պատմությունն ե դրել:

Նրա լերի, ալեքս ասկառին —
 Ու դեռն էլ ներքևում փրփրել,
 Փորել և հիմքերը նրա պինդ:
 Յեւ վորպես, վորպես մի Բիսուբուն
 Հայացքն իր ջրերին նա հառել,
 Կանգել և միշտ անխոս և արթուն
 Յեւ դիտել դարին ու դարեր:

Բայց մի որ դղրդում է ահա,
 Թնդում է շուրջը բոլոր ձայներից,
 Լսվում է խնդուխտն աղաղակ,
 Անդորը խանդարվում ձորի:
 Իր պատմութունն է կարծես դրել
 Նրա լերի, ալեքս ասկառին, —
 Փորում են ահա ժայռը հսկա,
 Ապառաժներ են անվերջ քանդում,
 Իջնում են քլունգները վստահ,
 Հարվածում անդադար և անդուլ:
 Դինամիտները մի ակնթարթ
 Պայթում են, դղրդում է հանկարծ
 Շրջապատն... ու կարծես թե ահա
 Զարթնում է հրաբուխ մի հանդած:
 Փռվում են շուրջը ծուխն ու փոշին.
 Քարերը աղմուկով թռվում,
 Թափվում են ձորը — և մշուշի
 Ամպերը տարածվում են հեռվում,
 Յեռում է աշխատանքն ամենոր,
 Գործում է ամեն մի կարող ձեռք.

Դասակարգն աջդարձ և կամենում —
 — Կառուցե՛ք, ամենքդ հառա կառուցե՛ք:

Սնցնում է ժամանակն ու ահա
 Շինվում է երկտրոկայան
 Յեւ մի որ թնդում է ավարտման
 Աղաղակը խրոխտ, հաղթական:
 Դառնում են անխիմները արագ,
 Ու շուրջը շողում է լույսերում,
 Բարձրանում դղրդուն ու շառաչ,
 Սրճադանքը հեռավոր ձորերում:
 Յեւ ժայռի ճակատին այն վողորիկ
 Փորադրվում է նիշը, — մեր մեծ
 Հաղթության նշանը, — անողոր
 Մեր սրայքարն ու վերելքը մեր վեհ:
 Կանցնեն դեռ, ո՞ր վորքա՞ն տարիներ,
 Կդառնան անխիմները կրկին,
 Յեւ որեր... ու նորից դարուններ...:
 Խնդուխտն, խրախճանք ու դրդիւ...:
 Ու ժայռը մամուռով կպատի,
 Սնճրեւ նրա մեջ կըծծե...
 Յեւ նորից հողմերը հակադիր
 Կծեծեն ճակատը նրա ծեր:
 Յեւ կըզան սերունդներ հետագա,
 Յերբ վոր մենք այլևս չենք լինի,
 Կըդիտեն այն ժայռն ու կկարդան
 Կենդանի մեր դործը վիթխարհի:
 Կկարդան յեռանդը մեր այդ վառ,
 Հաղթանակը մեր վրկաթեղան:

2409
Ենառւղյաղմը մեր անսպառ,
Մեր ընթացքը անչեղ, հաղթական:
Սե ժայռը նրանց լուռ, միառմի
Կառամե կյանքը մեր, և արթուն
Մեր կամքը, որերը մեր կարմիր,—
Փորակս հեռավոր ի հուշումն:—

Սրբազրեց Դար. Հակոբյան


Հանձնված է արտադրության 2 հուլիսի 1982 թ.

Մատրագրված է ապագրելու 29 սեպտ. 1982 թ.

Ստ. ձև № 5.

Պետերատի տպարան — ՅԵՐԵՎԱՆ

Դրագիր 7542 (ը) Պատվեր 2251 Տիրում 3000



ՀՀ Ազգային գրադարան



NI 0358206

ԳԻՆԸ՝ 60 407.

43945

**Արիս Միսակյան
ՆԱ ՍՈՒԴԵՄԵ**

ԳԻՅ ՍՍՐ Արմենիա Զրկան